



**Հ.Բ.Ը.Մ. - ՄԵԼԿՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ**  
**A.G.B.U. - MELKONIAN EDUCATIONAL INSTITUTE**

16 Մարտ 2004

Յարգելի Ծնող / Խնամակալ,

Որպես Մելգոնեան Կրթական Հաստատութիւն յաճախող ուսանողի ծնող՝ պարտք կը զգամ ձեզի հաղորդել Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան այն որոշումը որ կը վերաբերի Հաստատութեան ապագային: Հիմնուելով Հաստատութեան պատմութեան եւ ներկայ իրականութեան առնչուող տուեալներուն, Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը որոշած է փակել Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը 2004-2005 ուսումնական շրջանի աւարտին:


Կեդրոնական Վարչութեան որոշումը կը հիմնուի այն համոզումին՝ թէ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը ներկայ հայ իրականութեան մէջ իր առաքելութիւնը կատարելու ի վիճակի չէ: Անոնք կը հաւատան նաեւ թէ Մելգոնեան Եղբայրներու տեղականը լաւագոյն կերպով կարելի է իրագործել նոր ծրագիրներու ընդմէջէն՝ աւելի լայն շրջանակներ ընդգրկող:

Հ.Բ.Ը.Մ.-ը, իր նախատեսած նոր ծրագիրներու միջոցաւ, կը հաւատայ լաւագոյն կերպով ծառայել հայկական մշակութային ժառանգի փոխանցման, յարսիւթիւնի ներկայ աշխարհի մէջ:

Այս առիթով Կեդրոնական Վարչութիւնը կ'ընդգծէ երախտագիտութեան այն զգացումը որ կը տածէ Մելգոնեան Եղբայրներու քարեգործութեան հանդէպ եւ ինքզինք յանձնառու կը յայտարարէ անոնց յիշատակը յսերժացնել նոր եւ արդիական կրթական ծրագիրներու իրագործումով: Այս առիթով նամակիս կը կցեմ Կեդրոնական Վարչութեան Մելգոնեան Կրթական Հաստատութեան վերաբերող յայտարարութիւնը եւ բացատրողական գրութիւնը:

Կը վստահեցնենք որ Հաստատութեանս անձնակազմը իր կարելին պիտի ընէ, որպէսզի ձեր զաւկին ուսումնական կեանքը ունենայ անցման յաջող շրջան: Արագ՝ կապ պիտի հաստատենք ձեզ հետ, տեղեկութիւններ պիտի քաղենք ձեր զաւկին ուսումնական կեանքի ապագայ ծրագիրներուն մասին: Մէկտեղելով ծնողներէ քաղուած տեղեկութիւնները, պիտի խորհինք մեր հնարաւոր մասնակցութիւնը Յունիս 2005 թուականէն վերջ իսկ: Ներկայ տարեշրջանի աւարտէն առաջ, անպայմանօրէն, պիտի հանդիպինք ձեզի հետ, այս նիւթին առնչութեամբ:

Ծնորհակալ ենք որ դուք ձեր զաւկին կրթութիւնը վստահեցաք Մելգոնեան Կրթական Հաստատութեան: Մելգոնեան Կրթական Հաստատութեան ուսուցչական կազմին եւ իմ ցանկութիւնս է մօտ ապագային եւս շարունակել մեր համագործակցութիւնը՝ որպէսզի կարողանանք միասնաբար ճշդել լաւագոյն ուղղութիւնը ձեր զաւկին ուսումնական ապագային համար:

Յարգանքով  
  
 Անի Լաչինեան-Մակարեան  
 Տնօրէնուհի